IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՊՐՈ ՇԻՆ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից <<ՊՐՈ ՇԻՆ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.08.2025թ.-ին կայացված թիվ 04-2025 որոշումը անվավեր ճանաչելու (վերացնել) պահանջի մասին հայցը բավարարել.

1.1 անվավեր ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից <<ՊՐՈ ՇԻՆ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.08.2025 թվականին կայացված թիվ 04-2025 որոշումը:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ <<ՊՐՈ ՇԻՆ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am